




Տեսանկիւն

Պետական Մակարդակի Կրաւորականութեան Էսանսը

Անցեալ շաբաթ «Չարթօնք» Ազգային-Քրիստոնէական կուսակցութեան Նախագահ, յայտնի փաստաբան, ԶԶ Փաստաբաններու Պալատի նախկին Նախագահ, մեզի գաղափարակից ու զինակից Պարոն Արա Չոհրապետը, հետաքրքրական ու տեղին հարցադրում մը ուղղած էր Զայաստանի Բարձրագոյն Դատական Խորհուրդին, ինչ կը վերաբերի Թրքական դատարաններու հետ ԶԶ Բարձրագոյն Դատարանին գործակցութեան առկայութեան:



Երէկ եւ ըստ օրէնքի պարտադրանքին, ԶԶ Բարձրագոյն Դատական Խորհուրդի աշխատակազմի ղեկավարի լիազօրութիւնները ժամանակաւորապէս կատարող պաշտօնեայէն մեր ընկերը ստացած է պատասխան նամակ, որուն բովանդակութիւնը, ո՛չ միայն կ'ապշտեցնէ մեզի, այլ չափազանց վտանգաւոր երեւոյթ մը կը պարզէ:

Ըստ նամակի պատասխանին, յայտնի կը դառնայ, որ 2022 թուականին Թուրքիայէն Զայաստանի Զանրապետութեան դատարաններուն փոխանցուէր է 66 յանձնարարութիւն կամ իրաւական օգնութեան հարցում: 2023թ. Յունուար-Յուլիս ամիսներուն ստացուած է 34 նման դատական յանձնարարութիւն:

Կարելոր հարցումը այստեղ այն է, երբ Զայաստանի եւ Թուրքիոյ միջեւ չկան դիւանագիտական յարաբերութիւններ, ինչպէ՞ս կարելի է, որ Թուրքիան Զայաստանին վրայ դնէ նման պահանջներ կամ հարցումներ իր կողմէ հետապնդող անձանց մասին կամ երեւի նոյնիսկ պահանջէ անոնց յանձնումը...:

Պետական մակարդակի ապիկարութեան կամ կրաւորականութեան ի՞նչ մակարդակի վրայ կը գտնուին այսօր մեր հայրենիքին իշխանութիւնները:

Ինչպէ՞ս կարելի է մեր ժողովուրդին դէմ ցեղասպանութիւն գործադրած կամ Արցախի 44օրեայ պատերազմը ամէն կերպով հովանաւորած թշնամի պետութեան մը առջեւ այսքան խեղճանալ: Զետաքրքրական է իմանալ, որ փոխադարձաբար ԶԶ դատական համակարգը կը համարձակած է նման պահանջներ ներկայացնել Թուրքիոյ:

Արդե՞օք նոյնանման գործակցութիւն կայ նաեւ երկու երկիրներու Ազգային Ապահովական Ծառայութիւններու մակարդակի վրայ ալ: Այս ո՛րը հասանք:

Այս պահուս եւ ըստ պատասխան նամակին, բարեբախտաբար տակաւին Ազգային Դատարաններէն նման պահանջներ չկան, սակայն արդե՞օք «Խաղաղութիւն մուրացող» Զայաստանի իշխանութիւնները շուտով այդ անարգանքն ալ ճաշակել պիտի տան մեզի:

Այս տխուր իրավիճակին ի տես, Արա Չոհրապետն կոչ ուղղած է հայկական մետիայի ներկայացուցիչներուն այս նիւթով լրագրողական հետաքննութիւն իրականացնել, որուն սիրով պիտի ընդառաջենք եւ յանձնառու ենք ստացուած արդիւնքով իրագրել մեր ժողովուրդին զաւակները:

ՍԵՒՎԱ ՅԱՎՈՐԵԱՆ

Հայկական Լուրեր

Արցախի Մէջ Բնակչութեան Բնական Աճը Աւելցած Է 18,8 Տոկոսով




Արցախի մէջ բնական աճը ընթացիկ տարուան եօթ ամսուան տուեալներով 18,8 տոկոսով գերազանցած է Նախորդ տարուան ցուցանիշը: Այս մասին կը տեղեկացնեն Արցախի ազգային վիճակագրական ծառայութենէն՝ աւելցնելով, որ համեմատած 2023 թուականի 7 ամիսներուն, Նախորդ տարուան նոյն ժամանակահատուածի համեմատ ծնունդներու թիւը նուազած էր 7,9 տոկոսով, իսկ մահուան դէպքերը՝ 23,6 տոկոսով, այնուամենայնիւ, բնական աճը գերազանցած է Նախորդ տարուան ցուցանիշը: Զաշուէտու ժամանակահատուածին շուրջ 25 տոկոսով նուազած է ամուսնութիւններու թիւը, իսկ 9,1 տոկոսով՝ ամուսնալուծութիւններու:

Միջազգային Լուրեր

Թրամփ «Ես 2024 -ին Պիտի Յաղթեմ»

Միացեալ Նահանգներու Նախկին Նախագահ Տանըլտ Թրամփ յայտարարած է, որ 2024 թուականի Նախագահական ընտրութիւններուն իր յաղթելու հաւանականութիւնը «մօտ 100%» են: Այս մասին 13 օգոստոսին յայտնած է The Times-ը:



Թրամփ նշած է, որ Միացեալ Նահանգներու Նախագահի ներկայիս հանրապետական թեկնածուներէն ոչ մէկը իրեն մրցակից կը համարէ: Թրամփ ծաղրած է հանրապետականներու կողմէ առաջադրման համար իր ամենահաւանական մրցակց՝ Ռոն Տեսանթիսը, որ, ըստ հարցումներու, առաջատար է:

Շաբաթ օր ելոյթ ունենալով Այոուա Նահանգին մէջ, Թրամփ ըսած է. «Ան շատ վատ հանդէս կու գայ ընտրութիւններուն. շատ, շատ վատ: Եւ ես կը կարծեմ, որ ան շուտով կը լքէ մրցակազմը»:

Աւելի ուշ Թրամփ նշած է, որ ունի «մօտ 100 տոկոս» հնարաւորութիւն՝ յաղթելու Նախագահ Ճօ Պայտընի համապետական ընտրութիւններուն: Աւելի վաղ՝ 5 օգոստոսին, Թրամփ վստահութիւն յայտնած է, որ Միացեալ Նահանգներու ներկայիս Նախագահ Ճօ Պայտընն ու անոր շրջապատը կ'ընեն հնարաւոր ամէն ինչ՝ իշխանութիւնը պահպանելու համար:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. Աստուածածին Վանքի Ուխտի Օրուան Նուիրում Ա. Պատարագ Եւ Հայրապետական Պատգամ՝ Պիքֆայայի Վանքին Մէջ

Ներկայ հայկական իրականութեան դիմաց որքան պետք ունինք հաւատքի ու կամքի զօրութեան, որպէսզի կարենանք շարունակել ապաւինիլ Աստուծոյ փրկութեան խոստումին, իսկ Ս. Աստուածածնայ վերափոխման տօնին առընթեր Նշուած Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի ուխտի օրուան նուիրում Ա. Պատարագը առիթ կը ստեղծէ հաւատացեալներուն վերանորոգելու եւ վերանորոգելու իրենց քրիստոնէական յոյսը:



Արդարեւ, Շաբաթ, 12 Օգոստոս 2023-ի երեկոյեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Ս. եւ Անմահ Պատարագի ընթացքին արտասանած իր Հայրապետական պատգամը յատկացուց Արցախին եւ զայն յղեց հինգ հասցէներու՝ Հայաստանի իշխանութեան, Հայաստանի ժողովուրդին, միջազգային համայնքին, Սփիւռքին եւ Արցախի ժողովուրդին: Նշենք, որ հանդիսապետութեամբ Նորին Սրբութեան, Վանքի բացօթեայ Ս. Խորանին վրայ Պատարագը մատուցեց Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեան, առաջնորդ Արաբական Միացեալ Էմիրութեանց, Զաթարի եւ Շրջակայից Թեմի, երգեցողութիւնը կատարեց Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբը: Յաւարտ Ս. Պատարագին, Սրբազնագոյն Հայրապետը թափօրով խորան բարձրացաւ ու հանդիսապետեց խաղողօրհներբի եւ մատաղօրհներբի արարողութեան, որմէ ետք ուղղեց իր Հայրապետական պատգամը: Ան ըսաւ, որ խոր մտահոգութեամբ կը հետեւի Արցախի պարզած ներկայ ճգնաժամային կացութեան, երբ շրջափակումի ենթարկուած Արցախը սովամահ ըլլալու անմիջական վտանգին ենթակայ է: Ուստի, Հայրապետը դիմելով Հայաստանի իշխանութեան, հարց տուաւ, թէ ան կ'անդրադառնա՞ր արդեօք, որ իր որդեգրած մօտեցումները Արցախը կրնան ջնջել հայ կեանքի քարտէսէն ու ցեղասպանութեան մատնել 120 հազար հայորդիները, միաժամանակ վտանգելով նաեւ Հայաստանի ապագան: Նորին Սրբութիւնը շեշտեց, որ Հայաստանը պետք է տեր կանգնի իր շահերուն՝ զատորոշելով բարեկամութիւնը ենթակայութենէն: Աւելին, «Ազրայէճանի հետ բանակցութիւններու ընթացքին հարկ է, որ Հայաստանը դուրս գայ պարտուած ըլլալու հոգեվիճակէն եւ սոսկ զիջումներ կատարելու կացութենէն: Եւ աւելին, Հայաստանը պետք է առկախէ բանակցութիւնները մինչեւ որ վերջ գտնէ Արցախի շրջափակումը»: Վեհափառ Հայրապետը ըսաւ, որ Նոր պատերազմներէ խուսափիլ չի նշանակեր տեղի տալ Ազրայէճանի տակաւ բազմացող պահանջներուն: «Անհրաժեշտ է որդեգրել ճկուն, բայց մարտունակ գործելաճոճ, միշտ մեկնելով պատմականօրէն հաստատուած եւ միջազգային ճանաչում ստացած Լեռնային Ղարաբաղի ինքնավար կարգավիճակէն: Այլ խօսքով, պետք է մերժել որեւէ մօտեցում, որ Արցախը կը նկատուի Ազրայէճանի տարածքային ամբողջականութեան անբաժան մասը», ընդգծեց ան: Նորին Ս. Օծովութիւնը կարեւորութեամբ շեշտեց, որ «շրջափակումին կարելի փոխելով վերջ տալը եւ Արցախի ինքնորոշման կարգավիճակը առաւել շեշտաւորումով միջազգային հարթակ բերելը պետք է Հայաստանի իշխանութեան արտաքին քաղաքականութեան կիզակետը դառնան: Այս համահայկական հրամայականին լոյսին տակ եւ ներկայ ճակատագրական պայմաններուն մէջ, Մեր առաջարկն է, որ իշխանութեան, ընդդիմութեան ու Սփիւռքի ներկայացուցիչներէ բաղկացած քաղաքական ու դիւանագիտական հարուստ փորձառութիւն ունեցող մարմին մը, իր ետին ունենալով մեր ողջ ժողովուրդին նեցուկն ու վստահութիւնը, ամբողջական պատասխանատուութիւնը ստանձնէ վարելու Ազրայէճանի հետ տարուող բանակցութիւնները, բնականաբար՝ Նոր ոճով ու նոր մօտեցումով», թելադրեց ան: Դիմելով Հայաստանի ժողովուրդին, Նորին Ս. Օծովութիւնը տարօրինակ գտաւ տիրող լռութիւնն ու անտարբերութիւնը. ան կոչ ուղղեց ժողովուրդին փողոց իջնելու. «Մեր եղբայրներն ու քոյրերը եւ մեր երեխաները, սովամահ ըլլալու վիճակին մէջ կը գտնուին. դուք ի՞նչ կ'ընէք. փողոց իջէք, ինչի՞ կը սպասէք. աշխարհը մեզ կը դիտէ. ժողովուրդին ձայնը գերիվեր է բոլոր տեսակի ձայներէն ու տեսակետներէն: Ձեր ժամանակը մի՛ վատնէք ապառոջ քննադատութիւններով, փոխադարձ մեղադրանքներով, բացուած ձեռքերը աւելի խորացնելով: Ոտքի ելէ՛ք, արդարութիւն պահանջեցէ՛ք աշխարհէն: Հայաստանի մէջ կեանքը չի կրնար բնական



Պատմութեան Մէջ Այսօր

Սարգիս Սիւնգիւճեան

Սարգիս Սիւնգիւճեան (15 Օգոստոս 1870, Կոստանդնուպոլիս, Օսմանեան կայսրութիւն - 1915, հայ բժիշկ: Ծնած է 1870 թուականի Օգոստոս 15-ին, Կոստանդնուպոլիս: Մասնագիտութեամբ եղած է գանկաբան եւ դիմագետ: 1900-ական թուականներուն տպագրած է Վառնայի «Իրաւունք» եւ Կ. Պոլսոյ

«Ժամանակ» թերթերունմէջ: Կրած է Ս.Ս., Սուլին Ս., Սարգիս Սուլին, Սուլին Սարգիս, *** ծածկանունները: Կարեւոր պաշտօններ է վարած Կ. Պոլսոյ պատրիարքարանէն ներս, ինչպէս՝ պատրիարքարանի քարտուղարութիւն, ընտրուած Ազգային կեդրոնական վարչութեան քաղաքական ժողովի անդամ: 1909 թուականի Կիլիկիոյ կոտորածներէն ետք այցելած է աղէտի վայրերը եւ Կ. Պոլսոյ մէջ կազմակերպած՝ վերապրած որբերու ու այրիներու օժանդակութեան աշխատանքը, պատրիարքարանի ծիրէն ներս: Սպանուած է 1915 թուականին՝ 45 տարեկան հասակին:

ըլլայ, երբ անդին ծայրայեղօրէն անբնական է կեանքը Արցախի մէջ: Մեր ազգին միասնականութիւնը ու հաւաքական վճռականութիւնը ցոյց տուէք գործնապէս՝ ձեր դիմաց կանգնած արիւնարբու ազերիին» ըսաւ Հայրապետը: Երրորդ պատգամը ուղղելով միջազգային համայնքին, Վեհափառ Հայրապետը ըսաւ, որ ինչպէս 1915-ին, այսօր եւս հարց կու տանք, թէ ո՞ւր է միջազգային համայնքը: Ազրայէճան անպատիժ կերպով կը շարունակէ անտեսել Միացեալ Ազգերու Կազմակերպութեան, Եւրոպական Խորհուրդին, միջազգային իրաւական կառոյցներուն ապաշրջափակման կոչերը, իսկ միւս կողմէն Թուրքիա նեցուկ կը կանգնի շրջափակման ու Չանգեզուրի միջանցքի բացման մասին կը խօսի: Հայրապետը դիտել տուաւ, որ կարգ մը բարեկամ երկիրներու զօրակցութիւնը ու մարդասիրական օժանդակութիւնը, որոնց համար շնորհակալ ենք, բաւարար չեն տալու լուծելու. հրամայական է Արցախին անվտանգութիւնը ապահովել՝ անոր ինքնորոշման իրաւունքը ճանչնալով: «Մեր սպասումն է, որ յատկապէս մեծ պետութիւններ դիմեն գործնական քայլերու, առաջին հերթին ստիպելով Ազրայէճանին, որ վերջ տայ Արցախի շրջափակումին եւ ապա քաղաքական բանակցութիւններու ճամբով ճանչնան Արցախի ինքնորոշումը՝ միջազգային հովանաւորութեան ներքեւ» յայտնեց Նորին Սրբութիւնը: Իր պատգամը ուղղելով Սփիւռքին՝ Արամ Ա. Կաթողիկոսը վերլիշեցուց, թէ Սփիւռքը միշտ գործնապէս եղած է Արցախի կողքին՝ տնտեսական, բարեսիրական, քաղաքական ու քարոզչական հսկայ ներդրում կատարելով, ի խնդիր Արցախի հզօրացման ու զարգացման: «Արցախը կ'ողողի դէպի կործանում: Արցախը առանձին պետք չէ ձգել: Իւրաքանչիւր հայ եւ ողջ հայրութիւնը նուիրական պարտաւորութիւն ունի Արցախին նկատմամբ: Արցախի փրկութիւնը համահայկական առաջնահերթութիւն է», ըսաւ Հայրապետը ու աւելցուց, որ Սփիւքը կոչուած է դիմելու այնպիսի ազդու միջոցներու, որոնք Արցախի ներքին ուժականութիւնը կ'ամրապնդեն եւ արտաքին աշխարհին մէջ Արցախի ժողովուրդին ինքնորոշման ակնետաճգելի հրամայականը կը շեշտեն: «Այս ուղղութեամբ անհրաժեշտ է, առաջին հերթին, Սփիւռքի մարդուժը ու ներուժը համախմբել. երկրորդ, աշխատանքային յստակ օրակարգ կազմել ու թիրախներ ճշդել եւ երրորդ, տեղեկատուական մարզէն ներս ծրագրուած յայնածաւալ քարոզչութիւն կատարել՝ արաբական, իսլամական, եւրոպական, ամերիկեան, ինչպէս նաեւ միջ-եկեղեցական ու միջ-կրօնական շրջանակներէն ներս, համապատասխան շեշտաւորումներով», թելադրեց ան: Վերջապէս, իր պատգամը ուղղելով Արցախի ժողովուրդին, Վեհափառ Հայրապետը յայտնեց. «Սիրելի Արցախի հայրութիւն, Արցախը պարտուած չէ, յաղթական է Արցախը ու պիտի մնայ յաղթական՝ այնքան առեւ, որ ձեր կեանքը շաղախուած է ամուր հաւատքով, կռանուած՝ անխորտակելի կամքով ու թրծուած՝ պայծառ ապագայի տեսլականով» ու վստահեցուց, որ Արցախը առանձին չէ: Ան եզրափակեց իր պատգամը՝ ըսելով, որ «Արցախի ժողովուրդը Խորհրդարանին ճամբով արտայայտած է իր հաւաքական կամքը՝ «ճանաչում յանուն փրկութեան»: Արդար պահանջք մը, որ իրաւական հիմք ունի եւ կը համապատասխանէ պատմական իրողութեան ու միջազգային օրէնքին: Սա պահուն, Մենք եւս Մեր ձայնը միացնելով Արցախի Խորհրդարանին, կը յայտարարենք, թէ «խորապէս համոզուած ենք, որ վերահաս ողբերգութիւնը կանխելու միակ միջոցը Արցախի Հանրապետութեան անկախութեան ճանաչումն է՝ ՃԱՆԱԶՈՒՄ ՅԱՆՈՒՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ սկզբունքի հիման վրայ»: Արցախին դիմաց այլ ճանապարհ չկայ: Եկէ՛ք, ժողովուրդ հայոց, միասնաբար եւ արիաբար քայլե՛ք այս ճամբէն: Բի՛ւր պատիւ ու յարգանք Արցախի մեր սիրելի ժողովուրդին»:

Թիւ Չենք, Մարդ Ենք

ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՅԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ

Ամենօրեայ մեր ներկայ կեանքին մեջ թիւերը իրենց կարեւոր դերը ունին: Թիւերը մեր ամենօրեայ բառարանին անբաժան մէկ մասը կը կազմեն: Օրինակ, երբ մէկը կը փորձէ մեզ խաբել, մեզի սպառնալ, մեզ շահագործել սովոր ենք ըսելու, «Թիւ ունիմ, կրնամ ոստիկանութեան լուր տալ»: Երբ մէկը մեր գնահատանքին եւ համակրանքին առարկայ է, անոր կ'ըսենք, «Դուն ինծի համար թիւ մէկ բարեկամ ես»: Երբ մէկը իր արհեստին կամ արուեստին մեջ գերազանց տեղ կը գրաւէ իր տաղանդով եւ կատարումով՝ յաճախ կը նկարագրենք զայն իբրեւ «թիւ մէկ» արհեստավարժ կամ արհեստաւոր անձ մը:

Քրիստոսէ հինգ դարեր առաջ, հարաւային Իտալիոյ մէջ կ'ապրէր գիտնական փիլիսոփայ մը՝ Պիլատակորաս անունով, որ «Թուաբանութեան Յայր» կը կոչուէր: Ան կը հաւատար թէ այս աշխարհի մէջ ամէն ինչ թիւերու վրայ հիմնուած է եւ թիւերով կը բացատրուի: Եթէ ան ներկայիս ապրած ըլլար պիտի վկայէր թէ թիւերը որչափ տիրական եւ գործածական են մարդկային ընկերութեան մէջ:

Պահ մը եթէ մտածելու ըլլանք, պիտի նկատենք թէ որչափ թիւեր կը գործածենք մեր առօրեայ կեանքին մէջ, այն ատեն պիտի անդրադառնանք թէ որ աստիճան կախեալ ենք թիւերէ: Օրինակի համար, ամէնքս ալ ունինք տան հասցէի թիւ մը, մեր ինքնաշարժերու թիւերը, մեր ինքնաշարժ վարելու արտօնագրի թիւերը, մեր ծննդեան արձանագրութեան թիւը, մեր դրամատան հաշիւներու թիւերը, համակարգիչի թիւերը ու անոր յարակից այլ թիւեր, եւ դեռ երկար շարք մը այլ թիւերու: Եթէ այս բոլոր թիւերը համրելու ըլլանք անոնք տասնեակներու կը հասնին:

Անտարակոյս, թիւերը իրենց բարերար դերն ու կարեւորութիւնը ունին: Անոնք կը խնայեն ժամանակ եւ մարդոյժ տնտեսական զանազան գործառնութեանց եւ այլ մարզերու մէջ: Անկասկած անոնց գործածութիւնը կը դիւրացնէ մարդոց կեանքը:

Սակայն, թիւերը նաեւ ունին իրենց անպատեհութիւններն ու խոցելի կողմերը: Թիւերու աշխարհին մէջ փորձութիւն կայ մարդ արարածին անհատականութիւնը կորսնցնելու: Մարդ արարածը թիւ չէ, այլ անհատ է, անուն, արժէք եւ արժանապատուութիւն ունի: Թիւերով զայն ճանչնալ եւ զանազանելու ուրիշներէ ոչ միայն արդար չէ, այլ նուազագուցիչ է:

Մարդ արարածը թիւ մը չէ, առարկայ մը չէ, ամբոխին մէջ իր մը չէ, անբան անասուն մը չէ, այլ Աստուծոյ պատկերով ստեղծուած էակ մը: Ըստ Սաղմոսերգուին, մարդ արարածը փառքով ու պատուով պսակուած էակ մըն է, Աստուծոյ բոլոր արարածներուն վերակացուն է (Սաղմոս 8:6): Աստուած հետաքրքրուած է իւրաքանչիւր մարդու կեանքով, անոր մտածումներով եւ գործերով, անոր անցեալով ու ապագայով: (Սաղմոս 139:1-4):

Ըստ մեր Տիրոջ, Յիսուս Քրիստոսի, Աստուած ամէն մէկուն կեանքին համար ծրագիր մը ունի եւ ոչինչ կը վրիպի անոր ուշադրութենէն: Ամէն մարդու մազն իսկ համրուած է (Մատթ. 10: 30):

Այլ խօսքով, այս աշխարհի մէջ ամէն մարդ եզակի եւ առանձնայատուկ անձ մըն է: Չկան երկու անհատներ որ հարիւր տոկոսով իրարու նման ըլլան: Որչափ ալ մարդիկ իրարու նմանին, տակաւին իրարմէ տարբեր են իրենց մարմնով, միտքով, խառնուածքով եւ բնաւորութիւնով: Աստուած իւրաքանչիւր մարդ իւրայատուկ առանձնայատուկութիւններով օժտած է: Եւ իւրաքանչիւր անհատ իր դերն ու օգտակարութիւնը ունի:

Արդ, Աստուծոյ պատկերով ստեղծուած իւրաքանչիւր մարդու պարտականութիւնն է աստուածային նկարագրի պատկերը ցոլացնել իր ամենօրեայ կեանքով ու կենցաղով: Ամէն մարդու կոչումն ու պարտականութիւնն է արժեցնել այն կեանքը որ Աստուած շնորհած է իրեն: Իւրաքանչիւր անհատ աստուածային նպատակով մը դրուած է այս երկրագունդին վրայ:

Աստուծոյ համար մարդիկ թիւ չեն, այլ բանաւոր, ստեղծագործ էակներ, Ֆիզիքական, մտաւոր եւ բարոյական պարգեւներով օժտուած արարածներ, որոնք կը ծնին ազգի մը մէջ եւ ունին ազգային պատկանելիութիւն:

Արդարեւ, ամէն հայ աստուածային կարգադրութեամբ ծնած է, ան պատահականութեան կամ արկածի արդիւնք չէ: Հետեւաբար Աստուծոյ կամքն է, որ ամէն հայ մարդ պահէ իր ինքնութիւնը եւ հպարտ զգայ իր ինքնութեամբ: Ամէն հայ մարդ ապրի հայօրէն եւ արժանապատուութեան վստմ զգացումով՝ պտոցնէ իր ազգային պատկանելիութիւնը: Ի զուր չէ, որ հայ բանաստեղծը կը պատգամէ, «Հայ ապրինք եղբայրք մարդկութեան մէջը, հայ կնքել է մեզ պատմութեան էջը»:

Արդ, ո՛վ հայրոջի, ծանի՛ր գրեզ: Այս աշխարհի մէջ դուն սոսկ թիւ մը չես, այլ մարդ ես, հայ, մարդ:

Կրթութեան Շինարար Ներկայութիւն

(Կարլէն Միրզախանեանի 100 Տարին)

ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԵԼԵԱՆ

Թերեւս մենք առօրեայի հինհուրքի մէջ այնքան էլ չենք նկատում նրա տեսակի մարդկանց անցած ճանապարհի խորքը, տիրական բարեբեր ներկայութիւնը: Նրանք գուցէ բնաւորութեամբ կարող են յախուռն լինել, բայց խորքի մէջ քաջ գիտեն իրենց իրական արժէքը, կատարած աշխատանքի նշանառութիւնն ու նշանակութիւնը: Նրանք ուշադրութեան կենտրոնում կարեւորում են իրենց ծառայութիւնը, բայց նախընտրում են առանձնապէս շատ չերեւալ: Ժամանակը, ի վերջոյ, երեւան է հանում անհատականութեան կազմակերպական շնորհը, մատնում էութեան ներքին շերտերը, բացայայտում նուիրումի սահմանները:



Կարլէն Շիրայրի Միրզախանեանը յանձն էր ամել կրթութեան մէջ դժուարագոյնը. նախ նկատել դիմացիկի շնորհալիութիւնը, երեւան հանել այսօրուայ ուսանողի՝ վաղուայ արուեստագետի մէջ տաղանդի առկայծումը, նշմարել նրա անցնելիք ուղին, «թեթեւ ջանքով» դուրս բերել նրա միջից «աստեղային հիւանդութեան» հնարաւոր հովերը, ապա ի վերջոյ, հպարտանալ տաղանդի իրական հունդով: Դա ենթադրում էր չերեւացող ամենօրեայ տքնանք, մանկավարժի ներքին յամառութիւն, կամք, ուր ակնառու յաջողութիւնը երկար տարիների հաւատի ու բերկրանքի վերջնարդիւնքի պէս է, ինչը յաճախ կարող է տարրալուծուել միայն տաղանդի ու շնորհի դրսեւրումներում:

Բայց հո ամենատես մանկավարժը որսում էր, քաջ գիտէր իր իւրաքանչիւր ուսանողի՝ արուեստագետի լինելութեան ճանապարհին իր անկրկնելի դերակատարութիւնը, ինչպէս լաւագոյն մարդիչը՝ իր ներդրումի անփոխարինելի հատիկը սանի մէջ: Այսպիսի տեսողութիւնը խմորում էր նրա մէջ դեռ երեւանի պետական համալսարանի իրաւաբանական ֆակուլտետի ուսանողական եւ ասպիրանտական նստարաններից, երբ ուսման նպատակների՝ պատմութեան, իրաւագիտութեան կողքին որոնում էր յանձնառու նոր ընտրութիւնը մանկավարժութեան խորհուրդների հանդէպ: Իրաւաբանական ճիւղի հեռանկարը մնաց ըստ էութեան անաւարտ, երբ անգամ պաշտպանեց թեկնածուական աւարտաճառ նորագոյն շրջանի պատմութիւնից: Կարլէն Միրզախանեանի մասնագիտական որոնումների ճանապարհին հրապոյրները շատ էին. երիտասարդ գիտնականին անմիջապէս հրաւիրեցին համալսարանական իրաւաբանական ինստիտուտի հայկական մասնաճիւղ՝ ուսումնական աշխատանքի գծով պրօռեկտորի բարձր պաշտօնում վերագտնելու նոր կարիերայի ճանապարհը: Մինչդեռ լուծումը, շատերի համար անսպասելի, նա գտաւ Խաչատուր Աբովեանի անուն պետական մանկավարժական ինստիտուտում, մանկավարժութեան ոլորտում, ուր երեսուն տարի շարունակ վարեց իր հիմնադրած, իր նախասիրած գեղագիտական դաստիարակութեան, ապա կուլտուրայի վերանուանուած ֆակուլտետները: Իրագործեց ըստ էութեան իր մէջ հնուց բուն դրած վաղեմի ծրագիրը:

Դեռ անցեալ դարի 70-ական թթ.-ից Կ. Միրզախանեանը հաստատեց գիտական շարունակական նախաձեռնութիւններ, երբեմն նաեւ իրարից անջատ թուացող հեռաւորութիւններում. այսպէս, պատմութեան օրինաչափութիւնները նա շաղախեց չորս գրքերում՝ տնտեսագիտական եւ մշակութային հարուստ փորձով, ի մասնաւորի՝ նոր գուգահեռներով՝ մեկնելով Մեծ Հայրենականի շրջանի երիտասարդութեան հերոսականութեան սկզբնաղբիւրներից: Պատահական չէր, որ գիտական աստիճանի կողքին դասախօսը ստացաւ նաեւ Պրօֆեսորի կոչում՝ մանկավարժի բարձր ծառայութեան դիմաց:

Եւ իսկապէս. իր հիմնադրած ֆակուլտետը կարճ ժամանակամիջոցում դարձաւ Հանրապետութեան մշակութային գործիչների ձեւաւորման առաջնային եւ իւրատեսակ բարձրագոյն կրթական օջախ, ուր հասունանում էին արուեստագետների եւ հանրակրթական ասպարեզի մէջ անհատականութիւնը բարձր պահող ուսուցիչների նորանոր սերունդները, նրանք, որոնց վստահում էր ջահակիրներ լինել, հաւատալ իրենց ուժին:

Արցախի Պաշարման Տակ

Արցախի ՄԵՋ Առաջին Դասարանցիները Այս Տարի Պիտի Կրեն Արցախի ՄԵՋ Արտադրուած Դպրոցական Պայուսակներ

Արցախի նախագահի խորհրդական Լուսինե Կարախանեան Facebook-ի իր էջին վրայ հրապարակած է լուսանկարներ, ուր կ'երեւի, որ պայուսակի մակնշման տեղը գրուած է. «Արտադրուած է Արցախում՝ շրջափակման պայմաններում»:



«Այս գեղեցիկ ծրագիրը ի կատար կ'ածուի Հայ Կրթական Հիմնարկութիւն հիմնադրամին

շնորհիւ: Միասնական Հայրենիք ունենալու անփոխարինելի գգա-ցում», - գրած է ան:

Արցախի Ներկայ Ճգնաժամը Անյապաղ Ուշադրութիւն Եւ Հանգուցալուծում Կը Պահանջէ. Յայտարարութիւն

Բարեփոխուած եկեղեցիներու համաշխարհային միութիւնը (WCRC) կ'աջակցի եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի եւ Եւրոպական եկեղեցիներու համաժողովի կոչին՝ անյապաղ վերացնելու Լեռնային Ղարաբաղի շրջափակումը, եւ կոչ կ'ընէ ներգրաւուած կողմերուն ձգտելու տարածաշրջանին մէջ արդար խաղաղութեան հաստատման: Այս մասին կը հաղորդէ Armenpress.am-ը: WCRC-ն կը նկատէ, որ վերջին եօթը ամիսներուն ընթացքին Բերձորի միջանցքով իրականացուող բեռնափոխադրումները ալ անելի սահմանափակելէ ետք ազրպէյճանի կառավարութիւնը Յունիս 15-ին ամբողջութեամբ փակեց Հայաստանը Լեռնային Ղարաբաղին (Արցախ) կապող ճանապարհը, որ յանգեցուց աճող մարդկայնական ճգնաժամի:



«Յակամարտութեան կարգաւորման ուղղուած դիւանագիտական ջանքերը այդքան ալ արդիւնաւետ չէին, եւ 2020թ. երկու կողմերուն միջեւ սկսաւ նոր պատերազմ, որ տեւեց վեց շաբաթ մինչեւ կնքուեցաւ գինադադար Ռուսիոյ միջնորդութեամբ, որուն իբրեւ արդիւնք Հայաստանը կորսնցուց իր վերահսկողութեան տակ գտնուող տարածաշրջանի որոշ մասեր եւ յարակից եօթը շրջան», - կը գեկուցէ «Ազատ Եւրոպա» ռատիոկայանը: «Հայկական վերահսկողութեան ներքոյ Լեռնային Ղարաբաղը արտաքին աշխարհին հետ կապող միակ ճանապարհը Բերձորի միջանցքն էր:

«Յակամարտութեան կարգաւորման ուղղուած դիւանագիտական ջանքերը այդքան ալ արդիւնաւետ չէին, եւ 2020թ. երկու կողմերուն միջեւ սկսաւ նոր պատերազմ, որ տեւեց վեց շաբաթ մինչեւ կնքուեցաւ գինադադար Ռուսիոյ միջնորդութեամբ, որուն իբրեւ արդիւնք Հայաստանը կորսնցուց իր վերահսկողութեան տակ գտնուող տարածաշրջանի որոշ մասեր եւ յարակից եօթը շրջան», - կը գեկուցէ «Ազատ Եւրոպա» ռատիոկայանը: «Հայկական վերահսկողութեան ներքոյ Լեռնային Ղարաբաղը արտաքին աշխարհին հետ կապող միակ ճանապարհը Բերձորի միջանցքն էր:

Շար. էջ 05

Ազրպէյճանը Պետք Է Պատասխանատուութեան Ենթարկել Մարդկութեան Դեմ Յանցագործութիւններուն Համար. Քերոլայն Քոքս

Միացեալ Թագաւորութեան Լորտերու պալատի անդամ, պարոնուհի Քերոլայն Քոքսը միջազգային դերակատարներուն կոչ ըրած է վերջ տալու ազրպէյճանի հանդէպ թողտուութեան, որուն հետեւանքով այդ երկիրը սովի եւ ցեղասպանութեան կ'ենթարկէ արցախահայութիւնը: Այս մասին կը հաղորդէ aravot.am լրատուական կայքը:




«142 օր է, որ ազրպէյճանը ամբողջութեամբ կամ մասնակիօրէն դադրեցուցած է կազմատակարարումը Արցախ, իսկ 180 օր է, որ ելեկտրականութեան մատակարարումը ամբողջութեամբ խափանուած է, որուն հետեւանքով ալ բազմաթիւ կեդրոններու ամենօրեայ հոսանքազրկումներ եւ վթարային անջատումներ կ'արձանագրուին: Դպրոցները ստիպուած եղած են փակուիլ սնունդի պակասին պատճառով, իսկ տարածուող տեսանկիւթը ցոյց կու տան խանութներուն դատարկ ցուցափեղկերուն անչափ ցնցող պատկերները, երբ այդ ցուցափեղկերը պետք է լիարժէքօրէն համալրուած ըլլային սնունդով, դեղամիջոցներով եւ սարքերով՝ ամենօրեայ կարիքները սպասարկելու համար», - իրավիճակին կը ծանօթացնէ բրիտանացի

խորհրդարանականը: Յայտարարութեան մէջ պարոնուհի Քոքսը կ'անդրադառնայ նաեւ թերսման, ինչպէս նաեւ դեղորայքի եւ բժշկական պարագաներու պակասի պատճառով ստեղծուած ծանր առողջապահական իրավիճակին, կ'արձանագրէ՝ տուեալներ կան, որ յառաջացած դժուարութիւններուն եւ ճնշման մթնոլորտին մէջ վաղաժամ ծննդաբերութեան եւ մեռելածնութեան դէպքերը եռապատկուած են:

Հայ ժողովուրդի բարեկամ քաղաքական գործիչը նաեւ փաստեր կը ներկայացնէ ազրպէյճանի մէջ առկայ հայատեացութեան եւ ռազմատենչ տրամադրուածութիւններու բարձր մակարդակին հետ կապուած՝ ներկայացնելով երկու ցայտուն օրինակ:

«Բացէք Բերձորի Ճանապարհը». Ամերիկահայերու Յոյցը՝ Լոս Անճելըսի Մէջ պաքուի Հիւպատոսարանին Դիմաց

ԱՄՆ-ի հայ համայնքի ներկայացուցիչները բողոքի ցոյց կազմակերպած են՝ ի պաշտպանութիւն արդէն 8 ամիս շարունակ շրջափակուած Արցախի: Այս մասին կը հաղորդէ Tert.am-ը:



Ամերիկահայերը հաւաքուած են Լոս Անճելըսի մէջ պաքուի հիւպատոսարանին դիմաց՝ պահանջելով բանալ Բերձորի միջանցքը: Յոյցի մասնակիցները իրենց հետ բերած են Հայաստանի ու Արցախի դրօշակները, ինչպէս նաեւ Արցախի ապաշրջափակման կոչերով տարբեր պաստառներ: «Դադրեցուցէ՛ք Արցախի շրջափակումը», «Դադրեցուցէ՛ք հայերուն երկրորդ ցեղասպանութիւնը», «Արցախի հետ,

Արցախի համար», «Պատժամիջոցներ սահմանել ազրպէյճանի դէմ» եւ այլ գրութիւններով պաստառներ: Անոնք նաեւ կը վանկարկեն տարբեր կոչեր՝ պահանջելով բանալ Բերձորի միջանցքն ու դադրեցնել ցեղասպանութիւնը, որուն բախած են արցախահայերը 2023 թուականին:

Արցախի Պաշարման Տակ

Արցախի Ներկայ Ճգնաժամը Անյապաղ Ուշադրութիւն Եւ Հանգուցալուծում Կը Պահանջէ. Յայտարարութիւն

Սկիզբը Էջ 04

2020 թուականի պատերազմին իբրեւ արդիւնք ագրայեճանը ետ վերցուց ճանապարհը շրջապատող տարածքները, եւ ըստ զինադադարի համաձայնագիրին՝ ռուս խաղաղապահները պիտի վերահսկեն եւ ապահովեն ճանապարհին անվտանգութիւնը»:

Այնուամենայնիւ, ագրայեճանի կառավարութիւնը կը հրաժարի ստանձնելու համաձայնութեամբ նախատեսուած պարտաւորութիւնները եւ փոխարէնը կ'օգտագործէ ճանապարհի արգելափակումը Հայաստանի կառավարութեան եւ բնակիչներուն

վրայ ճնշումը զօրացնելու համար, նպատակ ունենալով ստանալ զիջումներ Արցախի վերահսկողութեան վերաբերեալ իր պահանջներուն մէջ:

Բարեփոխուած եկեղեցիներու համաշխարհային միութիւնը կը դատապարտէ անմեղ մարդոց առողջութիւնն ու կեանքը իբրեւ քաղաքական լծակ օգտագործելու մարտավարութիւնը եւ կոչ կ'ընէ իր անդամներուն հանդէս գալու շրջափակման վերացման եւ անկեղծ բնակցութիւններու օգտին՝ արդար եւ տեւական խաղաղութիւն ապահովելու համար»,- նշուած է հաղորդագրութեան մէջ:

Առողջապահական

Քաղցկեղի Քանի Մը Տեսակներու Հաւանականութիւնը Նուազեցնել Օրական Զորս Վայրկեանի Ընթացքին

«Աքթիվ» գործունէութեան 4,5 վայրկեանը կրնայ 32 առ հարիւրով նուազեցնել քաղցկեղի որոշ տեսակներու հաւանականութիւնը, բացայայտած են Սիտնիի համալսարանի գիտնականները: Հետազոտութիւնը հրապարակուած է JAMA Oncology ամսագրին մէջ:

Հետազոտութեան մասնակցած է 22,398 անհատ, որոնք շաբթուան ընթացքին կրած են սարքեր ամէնօրեայ «աքթիվ»ութիւնը չափելու համար. անոնք չեն զբաղած մարզանքներով: Հիւանդներու միջին տարիքը 62 տարեկան եղած է: Եօթ տարի ետք, գիտնականները գնահատած են «աքթիվ»ութեան տարբեր մակարդակ ունեցող մասնակիցներու քաղցկեղով հիւանդացուածութիւնը:

Ուսումնասիրութիւնը ցոյց տուած է, որ եռանդուն ֆիզիքական «աքթիվ»ութեան ընդամենը չորս-հինգ վայրկեանը ամէնօրեայ ինդիքները կատարելով քաղցկեղի յառաջացման ընդհանուր հաւանականութիւնը նուազեցուցած է 18 առ հարիւրով, իսկ անբաւարար «աքթիվ»ութեան հետ կապուած քաղցկեղի տեսակներու հաւանականութիւնը՝ 32 առ հարիւրով: Նախորդ հետազոտութիւնները ցոյց տուած են, որ մարզանքով չզբաղող մեծերը կ'ունենան կաթնագեղձի, «Էնտոմէթրիայի» եւ հաստ աղիքի



քաղցկեղի բարձր հաւանականութիւն: Ընդհատուող ֆիզիքական «աքթիվ»ութիւնը մօտաւորապէս մէկ վայրկեան «աքթիվ»ութեան բռնկումներն են, որոնք կը ստիպեն, որ շնչառութիւնը յաճախակի դառնայ: Օրինակները կը ներառեն «աքթիվ» աշխատանքը տան մէջ, ծանր պայուսակները խանութէն տեղափոխելը, զբօսանքը կամ եռանդուն խաղերը փոքրիկներու հետ:

Գիտնականներու կարծիքով՝ «աքթիվ»ութեան այսպիսի ազդեցութիւնը կրնայ կապուած ըլլալ «ինսուլին»ի հանդէպ զգայունութեան բարելաման եւ «քրոնիք» բորբոքման նուազումին: Հետազոտութիւնը կրած է դիտորդական բնոյթ, հետեւաբար ատոր եզրակացութիւնները ցոյց կու տան միայն կապ մը ըլլալու առկայութիւնը, այլ ոչ թէ պատճառ-հետեւանքային կապի գոյութիւնը:

Քաղաքներ Օտար Մամուլէն

Իրանական «Karzar.net» Կայքին Մէջ Մեկնարկած Է Ստորագրահաւաք՝ Բերձորի Միջանցքի Արգելափակման Վերացման Պահանջով



Իրանական «Karzar.net» կայքին մէջ մեկնարկած է ստորագրահաւաք, որ կը դատապարտէ Բերձորի միջանցքին ապօրինի շրջափակումը եւ կոչ կ'ընէ քայլեր ձեռնարկելու՝ Արցախի մէջ մարդկայնական աղետը կանխելու ուղղութեամբ:

ParsToday-ը կը գրէ, որ ստորագրահաւաքը նախաձեռնած է «Անահիտ» գիտամշակութային եւ գրական հանդէսի խմբագրական խորհուրդի քարտուղար Աբբաս Էղպալ Մեհրանը:

«Սննդամթերքի եւ դեղորայքի առաքման արգելափակումը եւ Արցախի 120,000 հայ բնակչութեան շրջափակումը պաքուի հանրապետութեան կազմակերպած ցեղասպանական գործողութիւններն են Արցախի հայութեան հանդէպ, որ կ'իրականացուի Բերձորի անցակէտին արգելափակումով՝ դէպի Արցախ պարէնային եւ դեղորայքի օգնութեան մատակարարումը կանխելու նպատակով: Իրանի հարեւանութեամբ գտնուող Արցախի մէջ տեղի ունեցող վերջին իրադարձութիւնները ցաւ կը պատճառեն իւրաքանչիւր մարդու՝ անկախ դաւանած կրօնէն կամ ազգութենէն:

պաքուի հանրապետութեան կողմէ միանգամայն կեղծ պատճառներով Արցախի մէջ բնակող 120,000 հայերուն ապօրինի շրջափակումը կը փաստէ, որ այդ երկիրը կ'իրականացնէ պետականօրէն կազմակերպուած եւ ծրագրուած ցեղասպանութիւն: Արցախի մէջ սննդամթերքի բացակայութիւնը, դեղորայքի եւ բժշկական սարքերու պակասը, տեղի 2000 յոյ կանանց եւ 30,000 երեխաներուն շրջափակումը կը փաստէ, որ պաքուի հանրապետութիւնը ակնյայտօրէն կ'անտեսէ

միջազգային պայմանագրերը եւ յայտարարութիւնները: Մասնաւորապէս՝ Հաագայի միջազգային դատարանին վճիռը, որ կը դատապարտէ Բերձորի անցակէտին անօրինական արգելափակումը: ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդի անդամ երկիրներուն կողմէ Բերձորի անցակէտի արգելափակման անտեսումը, Արցախը սնունդով ու դեղորայքով ապահովելու պատրաստակամութեան պակասը կը վկայէ աղետի խորութիւնը ընկալելու մարդկային անտարբերութեան մասին, որուն ականատեսն ենք այսօր Արցախի մէջ:

ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդի, ինչպէս նաեւ միջազգային կազմակերպութիւններու եւ մարդու իրաւունքներու անգործութիւնը պաքուի հանրապետութիւնը դարձուցած են անելի մեծամիտ՝ արցախցիները ձգելով դժուարութիւններու մէջ:

Անհրաժեշտ է, որ ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդը ընդունի բանաձեւ, որ պիտի պարտաւորեցնէ պաքուի հանրապետութիւնը վերացնելու Բերձորի անցակէտին արգելափակումը՝ ապահովելով Արցախի բնակիչներուն անվտանգութիւնը:

Այս առումով ցանկացած ծախողում կը հանգեցնէ 1915 թուականին օսմանեան կայսրութեան կողմէ կազմակերպուած Հայերու Ցեղասպանութեան կրկնութեան, իսկ ատիկա կը նշանակէ, որ ցեղասպանութիւնը եւ Արցախի հայութեան ցեղական գտնումները կը շարունակուին պաքուի կառավարութեան գիտակցութեան մէջ»,- նրոնք է յայտարարութեան մէջ:

Ստորագրահաւաքին մասնակցելու համար կրնաք այցելել <https://www.karzar.net/82029> կայքը:

Պատուհասի՞, ԹԵ՞ Պատեհութեան Օրակարգ

ԴՈՎՏ. ԶՐԱՅՐ ԸԵՂԵՃԵԱՆ

«Իրաքանչիւր պատուհասէ ետք
կայ նոր պատեհութիւն մը»
Ժողովրդային ասացուածք

«Կապրինք անբացատրելի զգացումներ, որոնք շատ են եւ խօսուն: Չեմ կրնար ներկայացնել անոնց ծաւալը, որպէսզի կարենաս լաւ կերպով հասկնալ մեր վիճակը Արցախի մէջ»:

Վիքթոր Կարապետեանը Հայ աւետարանչական ընկերակցութեան Արցախի գրասենեակի պատասխանատու-տնօրէնն է: Անոր մէջ երկար տարիներու տեւողութեան տեսած եմ համակ սեր եւ նուիրում՝ իր հոգեւոր եւ ազգային կոչումին: Ան հողին՝ Արցախին, կառչած հայն է, ան իր հոգեւոր եւ ազգային ինքնութիւնը շաղախած է հայրենի հողին հետ եւ, առանց յուսահատելու, կը գործէ մինչեւ այսօր՝ շրջափակման ահաւոր այս պայմաններուն մէջ:

Արցախի աւելի քան եօթը ամիսներու վրայ երկարող շրջափակումը ընդհանրապէս հայութիւնը եւ մասնաւորապէս արցախահայութիւնը դրած է շնչահեղձ ըլլալու աստիճանի հասնող կացութեան մը մէջ:

«Անբացատրելի զգացումներ կ'ապրինք, Վիքթորն է խօսողը: – 1990-ի պատերազմը ապրեցանք եւ հասանք մինչեւ քառասունչորս օրերու պատերազմը: Այս շրջափակումը տարբեր ողբերգութեան մը մէջ դրաւ Արցախը»:

Վիքթոր կ'ապրի իր եւ հայուն՝ իր ժողովուրդին ցաւը: «Եթէ ժողովուրդը հոգեպէս կը ճնշուի, նոյնքան եւ աւելի կը ճնշուի ֆիզիքապէս: Հաց ճարելու համար պէտք է կենսա երկար հերթի, ըսաւ Վիքթոր: – Շատ դժուար է տեսնել ծերունիներ, որոնք կը փորձեն կերակուր ճարել ապրելու համար»:

Վիքթոր կը տեսնէ, թէ ինչպէ՞ս արցախահայութիւնը կը փոխուի ներքնապէս՝ հոգեբանական առումով: Այս բոլորով հանդերձ, ան նոյնպէս կը տեսնէ եւ կ'ապրի հայուն անկոտորում կամքը: «Ոչ ոք կ'ուզէ զիջիլ, ըսաւ Վիքթոր: – Արցախահայութիւնը կ'ապրի արդարութեան համար եւ պատրաստ չէ զիջելու իր արդար կեանքը ապրելու տեսլականէն»:

Վիքթոր պարտաճանաչ առաջնորդն է, որ չ'ուզէր զիջիլ: Անցեալ յունիս ամսուն եւ անկախ շրջափակումին ստեղծած դժուար պայմաններէն՝ աւետարանչականի գրասենեակը չէ զլացած կազմակերպել 175 երեխաներու համար երկշաբաթեայ ճամբար մը: «Մանուկները պէտք ունին ուրախութեան, որմէ զրկուած են այս օրերուն», ըսաւ ան:

«Կուզէի ըսել, որ լաւ եմ»: Միքայէլ Հաջեանն է՝ ծանօթ լրագրող եւ իմ լաւ բարեկամս: Երբ կը խօսէի Միքայէլի հետ, արդէն մէկ ժամէ աւելի հերթի կեցած էր հաց ճարելու համար: «Երկու հատ հաց կըրցայ ձեռք ձգել», ըսաւ Միքայէլ: Եթէ Միքայէլին համար հացը ֆիզիքական գոյութեան համար է, բայց անկէ շատ աւելի ան կը հաւատայ ազգային ինքնութեան եւ ազատ ապրելու գրաւականին: «Մենք կը պայքարինք այս իրավիճակին դէմ, բայց նաեւ՝ բոլոր արտաքին ճնշումներուն դէմ», ըսաւ Միքայէլ:

Միքայէլին կեանքը անընդհատ պայքար եղած է: Միքայէլին երկու երիտասարդ զաւակները՝ Նորայրը եւ Երուանդը, նահատակուած են արցախեան պատերազմներու ընթացքին: Անոնք քաջամարտիկներ են, որոնք իրենց կեանքը զոհեցին հայուն պայքարին համար: Նորայրը նահատակուեցաւ 2016-ին, իսկ Երուանդը՝ 2020-ին: Միքայէլ, որ իր զաւակներուն եւ Արցախի ցաւը շալկած է իր սրտին ու կեանքին մէջ, կը շարունակէ ապրիլ պայքարի այս կեանքը: Միքայէլին կեանքը շատ սուղ արժած է իրեն համար, եւ չեմ ալ զիջեր, թէ կարելի՞ է իր նահատակ զաւակներուն կեանքի գինը սահմանել նիւթական արժեքափոխով: Բայց Միքայէլի կեանքին մէջ «յուսահատիլ» հասկացողութիւնը չկայ: «Մեր առաջնահերթութիւնը Բերձորի միջակցքի բացումն է, իսկ մեր գլխաւոր պահանջը՝ ինքնորոշման իրաւունքը», ըսաւ ան: Շահան Գանտահարեան կ'ընդլայնէ ու կը լուսաբանէ Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի յայտարարութիւնը («Ճանաչում յանուն փրկութեան») եւ կ'ըսէ. «Միջազգային այս բոլոր իրաւաչափութիւններու հիմնաւորումով կը ներկայանայ (խօսքը Արցախի Ազգային ժողովի մասին է, Զ. Ճ.) միջազգային հանրութեան՝ ճանաչում պահանջելով» («Ազգակ», 31 յուլիս 2023): Գանտահարեան կարեւոր կը նկատէ, որ «Ճանաչում յանուն փրկութեան» պահանջը դառնայ «առաջնային համահայկական օրակարգ»: Վիքթորը շրջափակման գիտա-ակադեմիական յօդուածը, որ անգլերէնով լոյս տեսաւ «Ալ Մաժալլա» կայքէջին վրայ, կը կրէ «Եօթը ամիսներու վրայ



երկարած ամրացած շրջափակումը Ղարաբաղի մէջ» խորագիրը: Վիքթորն էր ներկայացնել՝ արցախեան հիմնահարցի պատմական-քաղաքական տուեալները, ներկայ շրջափակումի ահաւորութիւնը, շրջանին մէջ տիրող աշխարհաքաղաքական իրավիճակները, անոնց հաշուարկումները եւ այլն: Վիքթորը շրջափակման յօդուածին վերջաւորութեան կը կարդանք հետեւեալ վերլուծումը. «Պարտադրելով (խօսքը Ազգային մասին է – Զ. Ճ.) շրջափակումը աւելի քան եօթը ամիսէ ի վեր՝ այսօր Ղարաբաղի ինքնորոշման իրաւունքը կարելի չէ նկատել այլեւս ընտրանք: Ան դարձած է անհրաժեշտութիւն»:

Իսկ անհրաժեշտութիւնը. «Ճանաչում յանուն փրկութեան»: Ասիկա հայուն համահայկական օրակարգն է այսօր:

Դարձեալ Վիքթորը. «Մեր կեանքը մեր ձեռքերուն մէջ չէ, բայց մեր ձեռքերուն մէջ չեղած կեանքէն չենք ուզեր հրաժարիլ», ըսաւ ան:

Վիքթորը հաւատացեալ եւ նուիրեալ արցախցին է: «Մեր հաւատքը Աստուծոյ վրայ է: Մեր յոյսը երբեք չի մարի»: Այս չմարող յոյսն է, որ կ'ապրի եւ կ'ապրեցնէ: Այս Վիքթորին, արցախահայութեան եւ հայ ժողովուրդին յոյսն է: Այս յոյսով մենք ապրեցանք մեր պատմութեան բոլոր ժամանակահատուածներուն հասանք մինչեւ այսօր: Եւ պիտի շարունակենք այս յոյսով:

Արցախի շրջափակումը եւ անոր ստեղծած մարդկային ահաւոր աղետը չեն կրնար ապարդիւն դուրս գալ: Ժողովրդային ասացուածքը շատ դիպուկ է այս իմաստով. «Ամէն պատուհասի մէջէն դուրս կրնայ գալ նոր պատեհութիւն մը»: Այս աղետը՝ պատուհասը, դուրս պիտի բերէ նոր պատեհութիւն մը: «Մենք արժանապատիւ ձեռով դուրս պիտի գանք այս վիճակէն»: Միքայէլի վերջին խօսքն էր մեր գոյցի ընթացքին: «Արցախի մէջ ստեղծուած այս շարժումը պէտք է դառնայ համահայկական: Սփիւռքին դերը այս իմաստով շատ կարեւոր է», ըսաւ Միքայէլ:

Չուշացաւ Վիքթորին գնահատականը. «Մարդկային կեանքին արժեքը շատ աւելի բարձր է, քան՝ սահմանազատումի եւ քաղաքական այլ հաշուարկները: Կան գրուած եւ չգրուած օրէնքներ, որոնք մարդուն կողքին են եւ անոր կու տան ապրելու իրաւունք», եզրափակեց Վիքթորը:

Այսօր Արցախի ինքնորոշման իրաւունքը ընտրութիւնն է այլեւս: Ան անհրաժեշտութիւն է: Հայը՝ Հայաստան, սփիւռք եւ Արցախ, պիտի հաւատայ եւ կառչի այս անհրաժեշտութեան: Այս անհրաժեշտութիւնը արցախահայուն ապրելու իրաւունքն է: Ապրելու իրաւունքը՝ արժանապատիւ ձեռով: Այս իրականութիւնը քաղաքական թէ բոլոր այլընտրանքներէն վեր է:

Հայուն արժանապատիւ ձեռով ապրելու իրաւունքը այսօր դարձած է անհրաժեշտութիւն: Անհրաժեշտութիւնը «Ճանաչում յանուն փրկութեան» իտեալ-կարգախօսը իրականացնելու մէջ է: Իրականացնելու համար կայ կարեւոր աշխատանքային տեսլական: Տեսլական, որ պէտք է վերածուի համահայկական օրակարգի:

«Ճանաչում յանուն փրկութեան»:
Բոլորս միասին՝ Հայաստանի, Արցախի եւ սփիւռքի մէջ, արժէ, որ կառչինք, հաւատանք եւ աշխատինք այս անհրաժեշտ օրակարգին ու անոր իրագործումին համար: Այս օրակարգը բոլորս միասին դարձնենք համահայկական:

Արցախը այսօր մեծ պատուհասի մէջ է: Հայութիւնը մեծ պատուհասի մէջ է: Փորձենք այս պատուհասէն դուրս բերել նոր պատեհութիւն մը, եւ այս իրականացնելու համար պատուհասի օրակարգը պէտք է վերածել նոր պատեհութեան օրակարգի:

Պատեհութեան օրակարգը: Հայուն համահայկական փրկութեան օրակարգն է:

Եւ կրնանք ընել:

Տեսակետ

Դեմոկրատները Մտմտում են

ԱՐՄԵՆ ՅՈՎՍԵՓԵԱՆ

Մի շատ հետաքրքիր տեղեկություն.- Հիլարի Բլինթոնը արդեն երեւում է մեդիայով... Շատ զարմանալի է, որ Հիլարի Բլինթոնի հետ հարցազրոյց անցկացրեցին ու նա պատասխանեց բազմաթիւ հարցերի, որոնք վերաբերում էին իր անձնական կեանքին, ընտանիքին, ուսանողական տարիներին ու քաղաքական գործունեութեանը:

Եւ ինչպէս միշտ՝ Հիլարին մեծարեց իր ծնողներին, յատկապէս մօրը, ասելով թէ նա ամենալաւն էր ցանկանում իրեն՝ իր կեանքի ողջ ընթացքում... Դուք ճանաչո՞ւմ էք որեւէ մայր, որ ամենալաւը չցանկանայ իր զաւակներին... Այս հարցի մասին Հիլարին խօսեց գոնէ 10 րոպէ:

Թէ ինչո՞ւ հիմա այս հարցազրոյցը. միայն կարելի է ենթադրել, ու ենթադրել գրառումները կարդալով: Իհարկէ, մէկ ամիս առաջ անցկացուած այս հարցազրոյցը Youtube-ով նայել են մօտ 27,000 հոգի եւ տեսանիւթը ստացել է մօտ 1,500 հաւանութիւն: Բայց ինչո՞ւ այս հարցազրոյցը ՀԻՄԱ:

Գրառումներ շատ կային, որ Հիլարի Բլինթոնը փայլուն անձնաւորութիւն եւ քաղաքական

գործիչ է, դրուատել էին նրա գործունեութիւնն ընդհանրապէս, ու յատկապէս որպէս Պետքարտուղար գործունեութիւնը: Նրան բազմաթիւ դրական անձականներով էին նշել, եւ... ՅՈՅՍ ՅԱՅՏՆԵԼ, որ նա նորից իր թեկնածութիւնը կառաջադրի ԱՄՆ նախագահական ընտրութիւններում...

Ահա՛ այն հիմնական հարցը, որի մասին մտմտում են դեմոկրատները եւ ուզում են իմանալ ժողովրդի կարծիքն ու հակազդեցութիւնը այս մասին:

Միաժամանակ, կային բազմաթիւ քննադատական գրութիւններ՝ հէնց որպէս Պետքարտուղար գործելու տարիներում: Մարդիկ յոյս էին յայտնում, որ նա շարունակի անձնական կեանքն ապրել իր ընտանեկան միջավայրում, ու կեանքը վայելի իր թոռնիկների հետ:

Ամեն դէպքում, պարզ է, որ դեմոկրատները դժուար վիճակում են հիմա: Ամեն օր նուազում է Պայտընին որպէս նախագահ պարտադրելու յոյսերն անգամ: Իսկ փոխարինողներ, կարծես թէ չկան: Եւ այդ իսկ պատճառով, հիմա նորից հրապարակ են բերել Հիլարի Բլինթոնին... Եւ ոչ-միայն այս հարցազրոյցն անցկացնելով: Աստուած պահպանի ԱՄՆ-ն, եւ աշխարհը:

ԲԱՆ ՈՒ ԳԻՐ

Արթուն Մի Երագ

Պատուհանից դուրս նայեմ՝
Այգումն ստտած լինես,
Ես աչքերիս հաւատամ՝
Իրական ու ճիշտ լինես:
Թեկուզ մի քիչ նեղացած,
Երեսդ թեքած լինես,
Թեկուզ յոյսիդ աղաւնին
Ազատ արծակած լինես:
Թեկու՛զ, թեկու՛զ բախտիդ հետ
Օրական հազար անգամ
Կռուած ու հաշտուած լինես,
Թափառած, յոգնած լինես,
Շոգից ծարաւած լինես:
Սանդուղքներով իջնեմ վար,
Թեկուզ մի քիչ ուշացած՝
Պապակ սրտիդ ջո՛ւր լինես,
Նուիրեմ սէ՛ր ու գգուանք,
Որ ցաւերդ մոռանաս,
Եւ որ գրկաբաց լինես:
Երգե՛մ գլուխս կրծքիդ՝
Ձայնս կարօտած լինես...
Եւ թէ յոյզեր վարարեն
Ու սիրտս անձրեւ տեղայ՝
Ճարճդ սրտիս մէջ փնջիր,
Սրտումս միշտ տեղ ունես...

ՀՐԱՆՈՒԹ ՄՈՎՍԻՍԵԱՆ

Կրթութեան Շինարար Ներկայութիւն

Սկիզբը Էջ 03

Ընդգծենք, այսօր էլ, երկարամեայ վաստակաշատ դեկանի մահից տասնեակ տարիներ անց, ֆակուլտետը պահում է իր վարկանիշը բուհերի մրցակցութեան մէջ: Պարզ է ու ակնհայտ մի ճշմարտութիւն՝ Կարլէն Միրզախանեանին լաւագոյնս յաջողուել էր մանկավարժական համալսարանում ձեւաւորել երկրի համար ոչ սովորական ուսումնական ստորաբաժանում: Այստեղ էին մշակութային ոլորտում անուն հանած լաւագոյն մասնագետների համախումբը, ճանաչուած արուեստագէտ ուժերի աստղաբոյլ, որոնց համար նախ եւ առաջ հպարտանում էին ուսանողները՝ իրենց մէջ յայտնաբերուած մանկավարժի ներուժը ի ցոյց դնելով, որ ասէին՝ ես Հենրիկ Մալեանի դասարանից եմ եղել, ես՝ Ֆրունզիկ Դովլաթեանի, Ազատ Ղարիբեանի կամ Յակոբ Ոսկանեանի, Եուրի Երզնկեանի, Վանուշ Խանամիրեանի, Ալբերտ Յավուրյանի եւ նրանցպէսների: Երախտաւորներ, որոնց համար արուեստագէտի ոգին զօրացնելու գաղտնիքն ուներ Կարլէն Միրզախանեանը: Սա յաջողութեան գրաւական էր արդէն ձեռագիր մշակած իւրաքանչիւր արուեստագէտի համար, կանխորոշուած, գիտակից ընտրութիւն վաղուայ ինքնուրոյն քայլերում:

Կարլէն Միրզախանեանի հաւաքական բնաւորութեան գծերի մէջ համատեղում էին մարդու սրատես հայեացքը, կենսախնդրութիւնը, սուր հումորը, բայց եւ պատուախնդրութիւնը, պահանջկոտութիւնը, դիմացիկի ներքինը անմիջապէս որսալու անսխալ բնագործ: Նա ուսանողին կերպափոխելու բացառիկ յատկութիւն ուներ. անգամ երբ կատակում էր, զննում էր ու կողմնորոշում շատ արագ, կռահում թէ ով է իր առջեւ: Դու դեռ կարող էիր նախնական



տպաւորութեան գերին մնալ, նա արդէն որոշում էր քո տեղը միջավայրում՝ լրջախոս գիտնական լինելի թէ մարզից առաջին անգամ եկած համալսարանական միջանցքներում շփոթահար ուսանող:

Բնագը էր դա, որ գուցէ զայիս էր իր խորաթափանց ծնողներից՝ Հանրապետութիւնում ճանաչուած, նշանաւոր մտաւորականներ իրաւաբան Ժիրայր եւ պատմաբան Եւգենիա Միրզախանեանների բերած, արեան մէջ ներարկած աւանդից, կրթութեան հանդէպ ակնածութեան դասերից, որոնք այսօր անցել են որդուն՝ նոյն ճանապարհով գիտական եւ կազմակերպական բարձունքի ուղի յաղթահարած պատմական գիտութիւնների դոկտոր, Փրոֆեսոր, Հայաստանի «Վահան Թեքեան» մշակութային միութեան նախագահ Ռուբէն Միրզախանեանին:

Յիրաւի՛, աւանդոյթի շարունակական ճանապարհ է սա, որ հիացում է առաջացնում, կրթութեան շինարարի աշխատանքին Միրզախանեանների գերդաստանի անսակարկ նուիրուածութեան վկայութիւն: Այդպիսին է Կարլէն Միրզախանեան մանկավարժ-գիտնականի անցած ուսանելի հարուստ ուղին մեր տպաւորութիւններում:


ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՑ

15 2023

ՕԳՈՍՏՈՍ

Կրկ Երկ Երք Չրք Հնգ Ուրք Շրթ

30	31	1	2	3	4	5
6	7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18	19
20	21	22	23	24	25	26
27	28	29	30	31	1	2



ԼԵՒՆ ԳՈՃՈՅԵԱՆ
(1924-2015)
«Բարդիներ»

ԳՈՅԺ



Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության
Լիբանանի Երջանակային Ցանձնաժողովը
էւ



ՀԲԸՄ-ՀԵԸ-ի Կեդրոնական Վարչությունը

ՀԲԸՄ-ի եւ ՀԲԸՄ-ՀԵԸ-ի Լիբանանի մեծ ընտանիքը
իր բոլոր յանձնախումբերով, վարչական ու համակիր անդամներով,
սրտի խոր կսկիծով կը գուժէ մահը՝

ՀԲԸՄիության երկարամեյ վեթերան ու աւագ վեթերան անդամ, ՀԲԸՄ-ՀԵԸի Ասպետներու
Խմբակցության երկարամեյ վարչական անդամ, տիպար միութենական՝

ԻՎԱՆ ԹԻՖԷԼՔՃԵԱՆԻ

որ պատահեցաւ Կիրակի, 13 Օգոստոս 2023-ին, Պէրութ.

ՄԱՐԱԶԴ

Տիկին Արաքսի Թիֆելքճեան
Իվ Թիֆելքճեան
Լարա Թիֆելքճեան
Տիկին Նաթալի Թիֆելքճեան եւ ամուսինը Տօթթ. Չիատ Մըլիըմ
Տիկին Սինթիա Թիֆելքճեան եւ զաւակը
Տէր եւ Տիկին Լորանս Թիֆելքճեան եւ դուստրը Նելլի
Տէր եւ Տիկին Ժիրայր Թիֆելքճեան եւ զաւակունք
Տիկին Սոնիա Խաչատուրեան եւ զաւակունք
Տիկին Սիլվա եւ Էտուար Չօլաքեան եւ ընտանիք
Թիֆելքճեան, Ուզունեան եւ Տեմիրճեան ընտանիքներ, Թապաքեան,
Մարաշլեան եւ Չապօսեան ընտանիքներ, Մարկոսեան, Չոփուրեան,
Խաչատուրեան եւ Մըլիըմ ընտանիքներ, եւ համայն ազգականներ կը
գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբօր, հօրեղբօր, մօրեղբօր եւ
հարազատին՝

Իվան Թիֆելքճեան -ի

Մահը որ պատահեցաւ կիրակի, 13 Օգոստոս 2023-ին:
Յետ կարճատեւ հիւանդութեան.
Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երեքշաբթի,
15 Օգոստոս 2023-ին, կէսօրէ ետք ժամը 1:00-ին, Անթիլիասի Սուրբ
Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը
պիտի փոխադրուի Ֆըրըն Շըպպէի Ազգային Գերեզմանատունը:
Ներկայս ընդունիլ իբրեւ մահազր:
Ցաւակցութիւնները կ'ընդունուին յետ թաղման արարողութեան ՀԲԸՄ-ի
Տեմիրճեան կեդրոնին մէջ մինչեւ երեկոյեան ժամը 7:00. Ինչպէս նաեւ
Չորեքշաբթի եւ Հինգշաբթի օրերը, 16 եւ 17 Օգոստոս 2023-ին
առաւօտեան ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00, նոյն վայրին մէջ:

Սոյն տխուր առիթով ՉԱՐԹՕՆԶ-ի ընտանիքը իր խորագգաց
ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալին հարազատներուն եւ
ընտանեկան պարագաներուն, ի մասնաւորի Տէր եւ Տիկ. Ժերար
Թիֆելքճեաններուն:

ՎԱՐՁՈՒ ԲՆԱԿԱՐԱՆ

Կը փնտռուի համեստ բնակարան մը մէկ կամ երկու ննջասենեակէ
բաղկացած: Նախընտրաբար գետնայարկ կամ առաջին յարկ:
Փափաքելի, որ բնակարանը գտնուի Տորայի մերձակայքը եւ երթուղային
ճանապարհի մօտ:
Ել նամակ՝. nassimfathallah2018@gmail.com
Հեռ.՝ +1 438 988 9705



**ԹԷՔԷԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԴՈԿՏ. ՆՈՒՊԱՐ ՊԷՐՊԷՐԵԱՆ
ԱՄԵՆԱՄԵԱՅ ՄՐՅԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ**

Մտաւորական, լրագրող, հասարակական գործիչ
եւ ՌԱԿ բազմաթիւ թերթերու շուրջ կէտարեայ խմբագիր
Դոկտոր Նուպար Պերպերեանի 2023 թուականի
մրցանակաբաշխութեան դիմելու մեկնարկը տրուած է:

Նուպար Պերպերեանի մրցանակը կը տրուի
հայկական ծագում ունեցող ուսանողներուն, որոնք կը
մասնագիտանան միջազգային իրաւունքի կամ
քաղաքագիտութեան մէջ:

Մրցանակաբաշխութիւնը սահմանուած է
մտաւորականի կտակին համաձայն, իսկ Պերպերեան
կեանքին հետագած է 2016 թուականի Նոյեմբեր 23ին, 94
տարեկան հասակին:



Մրցանակաբաշխութեան մասնակցելու
պահանջներն են՝

- 1) կրնան մասնակցիլ ուսումնական
հաստատութիւններու հայկական
ծագում ունեցող ուսանողները, որոնք գլխաւորապէս մասնագիտացած են կամ միջազգային
իրաւունքի, կամ քաղաքագիտութեան մէջ:
- 2) դիմորդը պէտք է ամբողջական դրոյքով ներգրաւուած ըլլայ աշխարհի
հաւատարմագրուած քոլէճներու կամ համալսարաններու պաքալորէայի կամ
ասպիրանթուրայի ծրագիրներով:
- 3) դիմորդը պէտք է ներկայացնէ ամբողջական տեղեկատուութիւնը, որ
սահմանուած է դիմումի ձեւով:
- 4) դիմորդը պէտք է ներկայացնէ քոլէճի գրագրի պատճէնը:
- 5) դիմորդը պէտք է ներկայացնէ դիմանկար:
- 6) դիմումը հնարաւոր է ստանալ Tcadirector@aol.com ելեկտրոնային փոստին
գրուած նամակի միջոցով:
- 7) դիմորդները պէտք է դիմումները ներկայացնեն ելեկտրոնային
տարբերակով՝ ուղարկելով Tcadirector@aol.com հասցեով:
- 8) յայտերի ընդունման վերջնաժամկէտը 2023 Սեպտեմբեր 30-ն է:
- 9) հիմնադրամի կառավարիչները 2023 թ. Հոկտեմբերին կը քուէարկեն
որակաւորուած յաղթողներու օգտին՝ հաշուի առնելով իւրաքանչիւր դիմումատուին
ներկայացուցած դիմումը:
- 10) յաղթողը կամ յաղթողները կը ստանան իրենց մրցանակները 2023
Նոյեմբերին:
- 11) յաղթողները իրաւասու չեն կրկին դիմել մրցանակի համար:

Ուղղորդաւ, ԱՄՆ

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ ՄԻԶՆ. ՎԱՐԺԱՐԱՆ

**Յաջորդաբար
4-րդ տարին ըլլալով
2023-2024 ՏԱՐԵՇՐԶԱՆԻ
ԿՐԹԱԹՈՇԱԿԸ
ԿԸ ՄԱՅ ԱՆՎՃԱՐ**

✓ **Հայեցի եւ Ազգային Դաստիարակութիւն**

★ Սկարագիրի Կերտման Ծրագիր

✓ **Կեանքի Հմտութիւններ**

★ Աշակերտակեդրոն Ուսուցում

✓ **Արտադասարանային Բազմազան Ծրագիրներ**

★ Արդի Արհեստավարժութեան Կիրառում

✓ **STEAM**

★ Հոգատար Միջավայր

ՎԵՐԱՍՈՒՑ

Պրէօվէ՝ Սեպտեմբեր 20
Նախ. - Միջն.՝ Սեպտեմբեր 28
Մանկապարտէզ՝ Հոկտեմբեր 4
Մանկամուր՝ Հոկտեմբեր 9

Արձանագրութիւնները կը շարունակուին
Սեպտեմբեր 5 -էն սկսեալ՝
Երկուշաբթիէն Ուրբաթ ժամը՝ 9-12

01/260525 - 01/260574 info@vahantekeyan.com www.vahantekeyan.com